

Ամբաս Բիւրաս

Նամբագրութիւն «Փիիւնիկ», Ի Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆՍԻԿ Է

Ձեռագիր եւ չ'դարձուի

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

ՓԻԻՆԻԿ

Կը ծախուի ՄԷԿ դրուս ողջի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

27 ՅՈՒՆԻՍ 1902

ԹԻԻ 2

Մ Թ Թ Ն Կ Ը

Շարաթներէ ի վեր տենդոտ անհամբերութեամբ սպասուած Միթինկը տեղի ունեցաւ վերջապէս ամսոյ 23 ին, երկուշաբթի իրիկուն ժամը 9 ին, քաղաքիս ծովեզերեայ թիրաւիս թատրոնին մէջ, ու տեւց մինչև գիշերուան ժամը 1 ը: Ինչպէս որ Պատ. ընթերցողները կը յիշեն, տեղական կառավարութեան արտօնութիւնն առնուած էր և կարգը պահպանելու համար հոն եկած էին ոստիկանութեան գործակալներ: Դեռ Միթինկը չը ս'յաժ, թատրոնին պարտէզը, արդիստի մագերը հովին տուած, սեղանի մ'առջև նստած զարմանալի երիտասարդ մը, ներս մտնողներուն կը բաշխէր սեղանի վրայի թուղթերու կոյտէն կտոր մը, Միթինկին ու զայն կազմակերպող կարգադիր Յանձնախումբին դէմ հասարակութիւնը գրգռելու յայտնի մտահոգութեամբ: Անցողակի ըսե'նք թէ շատերը կարգալէ յետոյ պատռեցին, ոմանք ալ տիրոջը վերագարձուցին թուղթի այդ կտորները:

Թատերաբեմին ճակատը խոշոր տառերով նշանակուած էր հոգեւոյս նուպարի նշանաւոր խօսքը. «ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՆ Է ԱՄԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ»: Թատերասրահին ալ ու ձախ կողմերը նոյնպէս խոշոր տառերով աչքի կը զարնէին երկու գեղեցիկ ու խորհրդաւոր վերտաւութիւններ. «ԿԵՑՑԷ՛ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ»: «ԿԵՑՑԷ ԺՈՂՈՎՈՒՐԴ»:

Երկսեռ բազմութիւնը հետզհետէ ներս կը խռնէր: Թատրոնին սրահը, օթեակներն ու վերնատունը լեփ լեցուն, ասեղ ձգելու տեղ չ'էր մնացեր. ներկայ էին 600 ի մօտ երկսեռ բազմութիւն մը, ինչ որ ցոյց կուտայ սպասուած մոտսֆի տոմարուն թիւը: Ներկաներուն մէջ աչքի կը զարնէին մանաւանդ տեղական օտար մամուլի քանի մը ներկայացուցիչները, մասնաւոր օթեակի մը մէջ. հոն, սրահին մէջ էր նաև խմբագիր Տիար Ե. Թորոսեան, որ Գահիրէէն յատկապէս իջած էր... Միթինկը տեսնելու փափաքով:
Միթինկը սկսաւ ժամը ճիշդ 9ին.

Կարգադիր Յանձնախումբին Նախագահը Ազն. Տիար Տր. Տիգրան Էնֆիեճեան, շրջապատուած Յանձնախումբին Պատ. անդամներէն (Տ. Տ. Յ. Ազնաւորեան, Յ. Ենորհքեան, Ե. Թուրչուճեան, Ա. Զարեհեան, Գ. Քէնտիկեան ու Ե. Հովիւեան) նաև Միթինկի բանաստեղծներէն (Տ. Տ. Մ. Տամատեան, Ե. Օտեան եւ Ս. Բիւրատ) թատերաբեմն ելաւ, քանի մը հակիրճ ու ազգու նախադասութեանց մէջ ամփոփելով տեղիս ազգային Առաջնորդութեան մէջն ու շուրջը գարձած վերջին տխուր իրողութիւնները, բացատրեց Միթինկին նպատակը, ժողովուրդին ուշադրութեանը յանձնարարելով բանաստեղծները, ի բեմ հրաւիրեց առաջին բանաստեղծը:

Տ. ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ, բանաստեղծներուն յատկացեալ սեղանին առջեւ կանգնած, սկսաւ իր բանաստեղծները, որ կը բաժնուի երկու գլխաւոր մասերու: Յստակ ու պարզ, ահուս ու ռամիկ մարդուն անգամ հասկընալի ու մաշսելի ոճով մը բացատրեց ընկերային կազմակերպութեան մէջ երեցած կարծիքի, գաղափարի ու սկզբունքի զանազան ձևերը, ազատական ու պահպանողական կենդանակցութեանց ծագումն ու անոր շարժառիթները, մէկիկ մէկիկ պարզաբանեց մեր Ա. Գ. Սահմանադրութեան յօդուածներուն տրամադրութիւնները, ազգին ու անհատին փոխադարձ պարտքերն ու իրաւունքները: Ու այս բոլորը կը ձգտէր լուսաբանելու այժմեութիւնը տեղական ազգային տգեղ ու վտանգաւոր կացութեան ու շեշտելու անոր վերջ մը դնելու անհրաժեշտութիւնը:

Յարգելի բանաստեղծ խօսքերը, հայրենասիրական անզուսպ զգացումներու ցոլքեր ու կայծեր, որոտընդոտ ծափերով կ'ողջունուէին յաճախ ու կընդունուէին պատգամի պէս: Հաւանութեան ազազակներուն մէջ Տ. Տամատեանի ձայնը քանիցս անլսելի մնաց, ապա ընդամենը մէջէ սակայն շարունակեց իր բանաստեղծները, որ անխախտ համոզումներու, անյաղթելի սկզբունքներու եւ անհերքելի փաստերու վրայ հիմնուած կարկեցուցիչ տրամաբանութիւնն էր:

Փիլիսիկի էջերը չը պիտի բաւէին ամփոփելու Տ. Տամատեանի բանաստեղծութեան վերլուծումն ու թողած բարերար տպաւորութիւնը: Տեղն է յիշել հոս թէ՛ երեք բանաստեղծիւններն ալ մօտերս պիտի լոյս տեսնեն զատ գրքոյկով մը:

Յարգելի բանաստեղծ, վերջացուց իր նիւթին առաջին մասը, ներկաներու խանդավառ ծափերուն մէջ:

Յետոյ Պատկ. Տիար Նախագահին հրաւերով բեմ ելաւ Տիար Երուանդ Օսեան. նստած, սկսաւ իր բանաստեղծները. «խնամակաշորեան շիւսսարանները»: Յարգելի բանաստեղծին գրական սեռը, որ տարամերժօրէն իրենն է, սոյն նիւթին մէջ երևան կուգար իր բոլոր լեզիովն ու մաղձովը. հոն աթոռին վրայ նստած, պաղարիւն բանաստեղծ, երգիծանքի ու հեգնութիւններու աարափ մը կը տեղացնէր ամբոխին գլխուն, ահռելի՛ իր փաստերուն մէջ, ու անգութ՛ իր վճիռներուն մէջ: Ոճը հարգարժներուն դատին պաշտպանութիւնն ստանձնող փաստաբանները գերազանցօրէն բարձր ու մարդկային գտաւ քան մեր խնամակալութեան ապուշ փաստաբանները: Ծափերուն քրքիշներուն մէջէն յանկարծ ձայն մը բարձրացաւ, անճոռնի պոռչտուք մը, ոգելիցի շոգիներէն տանջուող կոկորդէ մը ժայթքած, վայրկեան մը բանաստեղծ կանգ առաւ. պոռչտուքին միացան մէկ երկու մուտուքներ ալ, որոնք իբր թէ բան մ'ըսել ուզէին. ժողովուրդը զայրոյթի նշաններ ցոյց տուաւ կարգը խանդարել փորձող այդ պարոններուն տգեղ արարքին դէմ:

Յետոյ Պատկ. Տիար Նախագահին հրաւերով բեմ ելաւ Տիար Երուանդ Օսեան. նստած, սկսաւ իր բանաստեղծները. «խնամակաշորեան շիւսսարանները»: Յարգելի բանաստեղծին գրական սեռը, որ տարամերժօրէն իրենն է, սոյն նիւթին մէջ երևան կուգար իր բոլոր լեզիովն ու մաղձովը. հոն աթոռին վրայ նստած, պաղարիւն բանաստեղծ, երգիծանքի ու հեգնութիւններու աարափ մը կը տեղացնէր ամբոխին գլխուն, ահռելի՛ իր փաստերուն մէջ, ու անգութ՛ իր վճիռներուն մէջ: Ոճը հարգարժներուն դատին պաշտպանութիւնն ստանձնող փաստաբանները գերազանցօրէն բարձր ու մարդկային գտաւ քան մեր խնամակալութեան ապուշ փաստաբանները: Ծափերուն քրքիշներուն մէջէն յանկարծ ձայն մը բարձրացաւ, անճոռնի պոռչտուք մը, ոգելիցի շոգիներէն տանջուող կոկորդէ մը ժայթքած, վայրկեան մը բանաստեղծ կանգ առաւ. պոռչտուքին միացան մէկ երկու մուտուքներ ալ, որոնք իբր թէ բան մ'ըսել ուզէին. ժողովուրդը զայրոյթի նշաններ ցոյց տուաւ կարգը խանդարել փորձող այդ պարոններուն տգեղ արարքին դէմ:

Միջադէպը վայրկենապէս անցած էր ու կարգը վերահաստատուած :

Տիար Ե. Օտեան շարունակեց ու վերջացուց իր այնքան սիրուն բանախօսութիւնը — դժբաղդաբար յարգելի բանախօսին ձայնին անզօրութենէն՝ քիչ կը լսուէր — որուն մէն մի բառը սլաքի պէս կը ցցուէր խնամակալութեան կուշտին ու անոր ապուշ փաստաբաններուն գանկին. այն խնամակալութեան որուն մօտալուտ յուզարկաւորութեան առիթովը խորհուրդ կուտար վարձել — առ իչգոյէ դագաղին վրայ լացողներու — շաշկան կնիկներ, յարգելով տեղական սովորութիւնը :

Հոս, ներկաներուն ծափերէն ու ծիծաղներէն թնդաց սրահը :

Տ. Ե. Օտեան իր բանախօսութիւնը վերջացուց ըսելով. «Թո՛ղ այս Միթինկը հասցնէ խնամակալներու ականջին սա երկու աղբարար աղաղակները.

— Անկցի՛ եկանակաշուքիւն, կեցցե՛ Սանեանադրութիւն :

Ու ամբողջ սրահը, մէկ բերան, կրկնեց բանախօսին հետ այդ երկու բառերը, թնդացնելով թատրոնը :

Յետոյ, Տիար Սերաս Բիւրաս բեմ եկաւ, Տիար Նախագահին հրաւերով, ու նստած, սկսաւ իր բանախօսութիւնը «Սանեանադրութեան անցեալն ու ներկան» որուն վերլուծումը կը հրատարակենք այս էջերուն մէջ, կարգադիր Յանձնախումբին Պատ. անդամներէն Տիար Արսէն Զարեհեանի խմբագրութեամբը :

Փիւնիկին Տնօրէն-Սմբագիրը բանախօսութիւնն աւարտած էր «կեցցե՛ ժողովուրդը», «Վեռնի՛ կախաշականութիւնը» մաղթանքով, երբ դարձեալ բեմ եկաւ Տ. Մ. Տամատեան, շարունակել իր բանախօսութեան Բ. մասը, զուտ այժմէութիւնը շոշափող խորունկ ու խնամեալ ուսումնասիրութիւն մը պայքարին, անոր նպատակին, նշանակութեան ու հետեանքին վրայ : Ամբողջ սրահը, լարուած ուշադրութեամբ

լսուեց յարգելի բանախօսին հրատարակած բոլոր գաղանփները, որոնց անտեղեակ էր հասարակութեան մէկ մասը :

Կէս գիշերն անցած էր, երբ Տ. Մ. Տամատեան անվերջանալի ծափերուն ու կեցցէներուն հեղեղին տակ ընկճած, կնքեց իր բանախօսութիւնն ու քիչ յետոյ վերադառնալով բեմը, կարգաց ու թարգմանեց նախ շերմ համակրանքի ու ձայնակցութեան հեռագիրներ Եղիպտոսի քանի մը գաւառներէն ուղղեալ, որոնք փոխադարձ համակրանքով ողջունուեցան ժողովուրդէն :

Տիար Նախագահին արտօնութեամբ Տիար Մ. Տամատեան բարձր ձայնով արտասանեց Միթինկին Որոշմնագիրը, զոր ստորե կը հրատարակենք, ու Միթինկին մասնակցող 600 ի մօտ ներկաներուն առաջարկեց. — Ոսֆի ելնե՛ն որոնք որ կուզեն Սանեանադրութեան գործադրութիւնը : Սրահին մէջ, օթեակներն ու վերնատունը ոչ ոք մնաց նստած, ամենքն ելան օտքի, «կեցցե՛ Սանեանադրութիւնը» ազազակներով ու ծափերով, յետոյ նստան :

Տիար Մ. Տամատեան դարձեալ առաջարկեց ժողովուրդին.

— Ոսֆի ելնե՛ն որոնք որ խնամակաշուքիւնը կ'ուզեն.

Ո՛չ ոք ելաւ, բաց ի մէկէ մը, որ թատրոնին ներսերը կանգուն, կը մուտար, բտւեր մը կը ծամծմէր :

Այնքանագրիոյ հայ ժամանակակից պատմութիւնը փառաւորող էջերէն մին այս Միթինկը, որ, ինչպէս ըսուեցաւ, մայիս 18 ի կրաւորական բողոքին յարողը ներգործական բողոքն եղաւ :

Տեղական օտար մամուլը, գլուխ ունենալով յունականը, արժանապէս գնահատած է Միթինկը, ի վեր հանելով անոր բարձր նշանակութիւնն ու զայն նկատելով փայլուն ապացոյց մը տեղիս հայ հասարակութեան յառաջգիմասէր շարժումին ու ազատական ձգտումներուն :

Էնիքըն կագէր, Փար, Օւօօյա, Թա-
խիսրունս, Բոօլուէ, Գոռիէո Էնիքիսու,
Էն. այս Է Էւրիշ լրագիրներուն տեսու-
թիւնները յաջորդով պիտի հրատարակենք:

Կարճ խորհրդածութիւն մը.

Մարտ 23ին ու Յունիս 23ին միջև
Էրէք ամսու անջրպետ մը կայ, որուն մէջ-
տեղը կանգնած է, կոթողի պէս, Մայիս 18ի
Կիրակին, ո՛չ նուազ նշանակալից, «Անկյի
Խնամակալութիւնը» սեւ դրոշմը փակցնե-
լով կամայականութեան ճակտին: Այդ կի-
րակին, ինչպէս որ կը յիշեն մեր Պատ. ըն-
թերցողները, արգելուեցաւ «Ժողովուրդը
կը բողոքի» ին ընթերցումը, ու յետոյ
դարձեալ շարունակուեցաւ այն՝ ոստիկա-
նութեան հրամանովը մինչև ցաւարտ:

Ի՞նչ պատահած էր:

Օրէնքին յամառ ու անվեհեր պաշտ-
պաններէն մին, Տիար Յովհ. Շնորհքեան,
հանճարեղօրէն միջամտած ու պարզած էր
կացութիւնը ոստիկանութեան Պաշտօնէին,
թարգմանելով իմաստը բողոքին, ու իր
բացատրութեան մէջ դնելով շեշտ մը որ
խաւաքի մատուցելու ինչպէս զգացումնե-
րուն թելերն ու շիղերը ցնցած էր.
«Կարիպայի արժանաւոր սերունդ մը զըլ-
խարկը հանած ու երկիւղածօրէն պիտի շտ
այս բողոքը.» ու խօսքին միացնելով գոր-
ծը, իր ձեռքովը հանած էր գլխարկը պաշ-
տօնէին գլխէն ու նորէն անոր գլուխը
դրած:

Ու վերընթերցումը յաւելուածին՝
գործնական դաս մ'եղաւ օրէնքը ծաղրող
ու քուէները կոխկոտող նիւթի Մարդուն
ու իր Շուքերուն:

Իսկ Յունիս 23ի Միթինկը սրտառուչ
վերարժարձումնէ Մայիս 18ի Յոյցին, որուն
նշանակութիւնը շեշտեց անգամ մ'ալ:

Թո՛ղ այսուհետեւ անամօթարար, ու
անպատկառ իմաստակութեամբ ու շնական
սուտերով, աղկիւյոյց, անբարոյական խղ-
քակ անուանեն հասարակութեան ուշիմ, օ-

րինասէր ու յառաջդիմասէր ամբողջու-
թիւնը, որ, շարժուան մէջ հասարակ օր
մը, կրկուշարթի գիշեր, գիտէ պատուել
իր 600 անդամներուն ներկայութեամբ, իր
չաներն ու իրաւունքները պաշտպանող
Միթինկը:

Միթինկին նկարագրութեան վերջա-
կէտ մը դնելէ առաջ՝ տեղիս հայ Մամուլը
մասնաւոր պարտականութիւն կ'զգայ հրա-
պարակաւ թարգմանել հանրային գնահա-
տումը բարեացակամութեան, զոր ցոյց
տուաւ տեղիս հասարակութեան միշտ սի-
րելի նորին Վսեմութիւնը Աբրահամ Պէյ
Բարթող, Միթինկին իրիկունը գալով Բի-
րամիտ, ու մինչև վերջը վերահսկելով
կարգին պահպանումը, որուն գործնական
փայլուն ապացոյց մը տուաւ Միթինկին
ճանօթ փոքրիկ միջադէպին հերոսներն
անմիջապէս թատրոնէն դուրս հանել տա-
լով, Կարգադիր յանձնախումբին կողմէն
մասնաւորապէս նորին Վսեմութեան եղած
դիմումի մը հետեւանքով:

Ահա՛ անձնաւորութիւն մը, որ սխալ
կացութեան մը մէջ գտնուելով հանդերձ —
այսպէս կամ այնպէս հանդուրժելով օրէն-
քով անգոյ Խնամակալութիւն մը վարել,
մինչդեռ կրնար աւելի օգտակար ու յար-
գելի ընծայել իր բարձր պաշտօնը, ժողո-
վուրդէն ընդունած մեծաստուար քուէնե-
րուն ուժովը -- չը դադրիր անհատապէս
վայելելէ համակրանքն ու յարգանքը տե-
ղիս հասարակութեան, որ Միթինկին մէջ
հանդիսաւոր կերպով Խնամակալութեան
անմիջական բարձումն ու այդ հակասա-
մանադրական խորհուրդին լուծումը պա-
հանջելով հանդերձ, կը սիրէ տակաւին յու-
սալ թէ նորին Վսեմութիւնը պիտի ու-
նենայ գովելի ազատամտութիւնը՝ զանա-
զանելու իրարմէ անձնականութիւնն ու
պաշտօնը:

Պ Ա Տ Ճ Է Ն Ո Ր Ո Շ Մ Ն Ա Գ Ր Ի Ն

1902, 10|23 Յունիսի Երկուշարթի գիշերը, «Բիրամիտ» թատրոնին
մէջ, Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեան 600 անդամներու մասնակցու-
թեամբ գումարուած Միթինկը՝

Բողոքելով այն ձեռնարկներուն դէմ որոնցմով ժողովրդային օրինա-
ւոր ընտրութիւնները ոտնակոխ եղած են, նովին գործով բռնաբարուելով
Ազգ. Մանամադրութիւնը,

Բողոքելով մասնաւորապէս ընտրուածներէն ոմանց՝ Օրէնքին եւ պատ-
շաճութեանց հակառակ վարմունքին դէմ զոր ունեցած են՝ գեղծանելով
ժողովրդին կողմէ իրենց շնորհուած վստահութիւնէն,

Ինչպէս նաեւ Օրէնքը յարգողներուն եւ պաշտպանողներուն նկատմամբ
ձեռք առնուած անարեւելիք եւ սպառնական միջոցներուն դէմ,

Բողոքելով մա՛նաւանդ Խնամակալութեան մը բռնի եւ Օրէնքին հա-
կառակ հաստատման դէմ, իբր թէ՛ ի սէր խաղաղութեան՝ ժողովուրդը
ցոյց տալով երկպառակութեան եւ խռովութեան մասնուած, մինչդեռ իր
իրաւացի դժգոհութիւնները եւ բողոքները վերջ գտած էին օրինաւոր
ընտրութիւններու կատարմամբ .

ԿԸ ՊԱՀՍՆՁԷ

Ա. Ժողովրդին՝ Օրէնքով նուիրագործուած իրաւունքներուն յարգուի-
լը, կամայականութեան դադարմամբ .

Բ. Ազգ. Սահմանադրութեան եւ անոր յարակից Հրահանգներուն ամ-
բողջական գործադրութիւնը՝ համարատուութեան եւ համարաուութեան տա-
րամերժօրէն ազգօգուտ սկզբունքները կիրառութեան դրուելով առանց վե-
րապահութեան .

Գ. Օրէնքով անգոյ Խնամակալութեան անմիջական բարձումը, եւ
Մարտ 10)23 ին ընտրուած Թաղական Խորհրդին ամբողջացումը, ըստ Սահ-
մանադրութեան՝ հրաժարելոց տեղ նորոգ ընտրութիւններով .

Եւ, կը խնդրէ Տ. Նախագահէն հաղորդել ներկայ Որոշմագիրը ուր որ
հարկ է :

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՍ

«Փիւնիկ»ի Պատ. Խմբագիրը, Տիար Ս.
Բիւրատ, իր բանախօսութեան նիւթ ընտ-
րած էր այժմէութիւնը շօշափող «Սահմա-
նադրութեան անցեալն ու ներկան» .

Յարգելի բանախօսը պատմական տե-
սութիւնովը սկսաւ կէս դարէ ի վեր ազ-
գային կեանքին կրած յեղաշրջումին, ամ-
փոփումը ընելով, իրեն յատուկ բանաս-
տեղծի հմայիչ ու ճկուն ոճովը, որ առաջին
վայրկեանէն իսկ խորունկ տպաւորութիւնմը
կը թողուր հանդիսականներուն վրայ, որոնք,
ամբողջ ուշադրութեամբ լարուած մտիկ
ըրին զինք ու խանդավառ ծափերով թըն-
դացուցին թատրոնը :

Յարգելի բանախօսը, հուրի շունչ մը
դրած էր իր տողերուն մէջ. իր տառապած
ցեղին վիթխարի ցաւն էր որ կը ճչէր, կը
պոռթկար, սորկութեան, գերութիւն դա-
բաւոր կեանքին սարսուռը կուտար մեր

երակներուն՝ անոր ցաւագին վերլուծումովը.
մինչեւ այնտեղ՝ ուր այլեւս, «վերջին ճրգ-
նաժառիկն մեջ, վերջին ճիգ մը քափեց
(հայը) ինձիսի գուրս հանկուռ այդ մտու-
սեկն...» գոչեց:

(Մափե՛ր,)

Եւ ուրկէ «պայքեցաւ 1839 ի կռիւր,
Աւիրայի ու Էսկափի երես երեսի կռիւր,
որ կարապետեց ազգը դեպի սահմա-
նադրութիւն» .

(Մափե՛ր,)

Ու այսպէս կը փակէր այդ կէս դարու
պատմութիւնը, անցնելով այն շրջանին ուր
ազգային գիտակից կեանքը կը սկսէր :

«Կանգ առնենք հոս, վարագոյր մը ձը-
գենք այդ առաջին կեսին անօրայի պատ-
կերիս վրայ. քայքայի մ'ընենք, ու առանց
մեր ետին նայելու, միշտ առաջ, միշտ դե-
պի յոյս, անցնիմք նոր հանգրուանը, ուր
պիտի գտնենք բոլորովին նոր, չքնաղ, գե-
ղեցիկ ու մխիթարիչ պատկերներ: Վեցնիկի
Ռաֆայելեանին ու Բարիզի Մուրատեանին

հասուցած նոր սերունդը պիտի տեսնենք
նիւսյ գործի գլուխը. 48 ի փրակն. յեղա-
փոխութեան մեջն կուզան անոնք, հայ
ցեղին ազատութեան ախոյեանները, հանձարի
անմահ գաւակները:»

(Ծափեր՝ ծափեր.)

Կը շարունակէ,

«Տիկիկնե՛ր ու պարոննե՛ր, ոսփի ելե՛ք,
միաբերան ու միահաւուռ պաշտումով մը,
ազգին զլխէն անցած բոլոր ֆաղցր ու սը-
խուր դեպքերուն վերջուշունովը Հայրենի-
քին, Արարասին ու Սիսուանին անբողջ սերն
ու անբողջ կարօսը ձեր արտին մեջ ծա-
րած ոսփի ելե՛ք, պաշտեցե՛ք մեր ազգին ան-
մահ բարեբանները. Գրիգոր Օսեան ու Գրի-
գոր Աղաթոն, Տօֆ. Սերվիչեկ, Տօֆ.
Ռուսիկեան ու Տօֆ. Ասլանեանն ու Սահակ
Ապրօն».

Բոլոր հանդիսակամները ոտքի ելան
սուրբ սարսուռով մը համակուած՝ որոտագին
անվերջ ծափերով ընդմիջեցին բանախօսը,
որ շարունակեց. «նայ երկնփին հաւաստե-
ղութիւնը, աստուծոյ բոյսը, որոնք այս
պահուս մեր վրայ կը հսկեն, մեզի կը
նային»

Հայրենաշունչ այս տողերը յուզեցին
սիրտը ամբողջ հանդիսակամներուն, երախ-
տագիտութեան անմենաանկեղծ ու բուռն
արտայայտութիւնն էր որ կը լլար այդ ան-
մահ հոգիներուն պաշտելի յիշատակին ... ,
որոնք ազգային գոյութեան կառոյցին հիմ-
նաքարերը եղան հիմնելով Սահմանադրու-
թիւնը: Եւ ահա՛ ինչպէս յիշատակեց, 1861 ի
այդ ազգային է՛ն նուիրական ու պատմա-
կան թուականէն է, ուրկէ սկսած է սահ-
մանադրութեան հիմնարկութիւնը, որուն
խիստ հետաքրքրաշարժ ու արկածալիլը
պատմութիւնը ըրաւ՝ վերջիչել տալով մեզ
այդ պատմական անցեալին մէջ սահմանա-
դրութեան շուրջը գոյացող բարդութիւն-
ներն ու անցքերը, որոնց հետ համանման
կացութիւնը շօշափել կուտար Աղեքսան-
դրիոյ սահմանադրութեան ներկայ հրատապ
խնդրին. «անբոխը կը յուզուի, ձայներ կը
բարձրանան, օրէնք կազմենք, օրէ՛նք, սահ-
մանադրութիւնը պիտի է գործադրուի» ի
այս անցեալին աղաղակները ատենաբանին՝
ծափերով ու կեցցէներով կրկնուեցան:

Յարգելի բանախօսը, շրջանէ շրջան
անցնելով, կուգար եզրակացնել ըսելով.
«Օրէնքը ցեղին կապը, յառաջդիմութեան
շարժիչը, ազատագրութեան ջիղը. կրօնը,

չեզուն, պատմութիւնը, գրականութիւնը,
վերջապես ազգային ինֆլուորիւնը պահող
ու գոյութիւնն երաշխաւորող նախախնա-
մութիւնը»:

Որոտագին ծափեր, բացազանչութիւն-
ներ

«Բարեբաններու գործերը տեսական,
հաստատուն չեն, ցորչափ ապահովագրուած
չեն ազգ. իշխանութեան մը կողմէն, եւ ա-
սոր իբր հաստատութիւն, յարգելի բանա-
խօսը, փոխաբերաբար աւելցուց նովբովի
սախօսքերը. «կարգն ու արդարութիւնը կա-
րելի չէ որ երկրի մը ծոցը սիրեն, մինչեւ
որ ֆաղսագիները հաւասար իրաւունքներ
չունենան: Գանի մը անհասկեր չափազանց
հզօր, ֆակի մը անհասկեր այ չափազանց
սկար եղա՞ն, կարգն ու արդարութիւնը ին-
չի կուտան բունպետութեան ու յետոյ ա-
նիշխանութեան. նոյնն է ազգերուն համար»:

Բողոքի ժայթքումն էր որ հանրային
բռնաբարուած իրաւունքէն կուգար. եւ Պ.
Ատենաբանը թարգմանը եղաւ Աղեքսան-
դրիոյ հասարակութեան միաճամուռ կամ-
քին ու ըղձանքին, աւելցնելով. «պիտի չու-
նիք կոչի կամ ազդարարութեան, բարձրա-
ցրելու համար ձեր արդար գայրոյթի ու
բողոքի աղաղակը կանայականութեան դեմ:

(Ծափեր.)

Իր «Ի՞նչ կուզենք»ներու յուզիչ տո-
ղանցութիւնը՝ ամփոփումն էր ազգային
գոյութեան ու բարգաւաճման անխուսա-
փելի պայմաններուն, որ սահմանադրու-
թեան անպայման գործադրութիւնը կը
պահանջէր. անոր՝ մեզի տալիք անսահման
բարիքներուն թուումովը. միանգամայն
ուժգին շեշտով մը բոլոր կամայական ձգ-
տումներուն բարձու-իլը պահանջելով, որոնց
աղետալի հետեւանքներուն ծնունդը եղաւ
ներկայ Միթիւնը (Անընդհատ ծափեր.)

Յարգելի ատենաբանին վերջին խօս-
քերը եղան:

«Գիտե՛մ դուք չեք կրնար նուստանայ,
ցածնայ, ստիակնայ, Աղաթոնի ու Օսեանի
սերունդ. (ծափեր) ու յետոյ էք անկեղծ պահեչ
անոնց յիշատակն ու անբունաբարելի՛ գործը,
Սահմանադրութիւնը:

«Կրնանք ուրեմն հիմնայ գոչել արտա-
գին եւ ուժգին. «Կեցցե՛ Սահմանադրու-
թիւն»:

(Կեցցէնէ՛ր ծափեր.)

«Օրհնեա՛յ ըլլայ օրհնփին հիմնադիր-
ներուն անմահ յիշատակը»:

Ծափե՛ր,
«Ապրի՛ ժողովուրդը:
«Մեռնի՛ կամաշահանութիւնը.
Որոտալի ծափեր:

Ա. ԶԱՐԵԶԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴԵՐ

Փիւնիկը կը ծախուի Ա. Ղեքսան-
դրիոյ մէջ.

ՏԻԱՐ ԲԱՐՍԵՂ ԹԵԼԼԱԼԵԱՆ Ի
քով, Նէրիֆ բաշա փողոցը.

ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՂԱԶԱՐԵԱՆԻ
քով, շէպէն գաւազօղի փողոցը,

ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԻԿԵԱՆ Ի
քով, ՆՈՐ ԴՍՐ կաթնարանը.

Բաժանորդագրութեան համար
գիմել վերոյիշեալ Պատ. Տեսարց, կամ
նամակով Փիւնիկի հասցէին:

Թերթը մերժողներէն կը խնդրուի
որ վրայի պանօք չը պատուեն, կամ
եթէ պատուելէ, թերթը բանալ ու
կարդալէ ետքը մերժել ուզեն, գոնէ
հաճին իրենց անունը նշանակել ետ
գարձուած թերթին պանօքն վրայ,
որպէս զի դադրեցընենք առաքումը:

Պատ. Բաժանորդներէն անոնք որ
փոխած են իրենց հասցէն, թող հա-
ճին շուտով հաղորդել խմշագրու-
թեանս իրենց նոր հասցէն:

Փիւնիկի գործակալները կըս-
տանան միշտ 1 օրինակ Փիւնիկ, և ի-
րենց գանձած գումարին 10 0|0ը. Ար-
տասահմանէն Փիւնիկի գործակալու-
թիւնն ստանձնել փափագողները գի-
մեն մեր հասցէին:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ԷՍԹ ՈՒԷՍԹԻ

Բարից 14 Յունիս 1902

Մօնթէնէկրօ - Սեւ լեռ

Գործակալութեանս Քիւսթէնէի
(Ռումանեա) թղթակիցը հետեւեալ ռա-
հեկան թղթակցութիւնը դրկած է մեզ,
գոր սիրով կը դրնենք հայերէնի բաժ-
նին մէջ, մանաւանդ որ մեզ հաղոր-
դուած տեղեկութեանց համեմատ, այս
միջոցիս այն կողմերը բաւական խլր-
տումներ կան...

— «Մօնթէնէկրօի զինուորական կազ-
մակերպութիւնը բնաւ փայլուն եղած
չէ. սակայն 1897 էն ի վեր, կառա-
վարութիւնը մեծամեծ ջանքեր քրա-
իր բանակին մէջ կարելու բարեփո-
խումներ մտցնելու: Մինչեւ այս վերջին
ժամանակներս, Մօնթէնէկրօ կանոնա-
ւոր բանակ մը չունէր, նոյնպէս եւ
մեզական զնդեր, այլ ամէն տարի չա-
փահասները (զինուորական պարսա-
կանութիւնը կասարելու) կը կանչուէին
դրօշի տակ եւ ժամանակ մը կը վար-
ժուէին զինակրութեան:

Միայն վերջերս՝ Սաֆա-Մէյնէնկըն
իւխանի խորհրդով — այս իւխանը մի
եւ նոյն խորհուրդները տուած էր ժա-
մանակին Յունաստանի բանակին կազ-
մակերպութեան համար — Մօնթէնէկրօի
մինիստրութիւնը որոշեց մեզական
փոքրիկ բանակ մը կազմակերպել:
Այդ բանակին կազմակերպութիւնը հե-
տեւեալն է 1. մի գունդ հետեւակ զօր-
բերու, մի հրամանատարով եւ մի փոխ-
հրամանատարով, չորս հարիւրապետ
(կապիտէն), 10 սպայ եւ 60 ենթաս-
պայներով: Ամէն տարի, ապրիլ ամիսի
մէջ կը կանչուին բոլոր զինուորական-
ները որոնք երկու մասի կը բաժնուին,
մէն մի գունդն 500 հոգի ունենալով,
սեպտեմբերին կ'սկսի զինավարժութեան

ժամանակը եւ կը տեւէ 4 ամիս միայն: 2. Մի գունդ թնդանօթաձիգներու, մի հրամանասարով, 10 սպայներով եւ 12 ենթասպայներով, որոց ամէնքն ալ Խալիոյ զինուորական վարժարաններէն ելած են: Ասոնք վեց ամիսը անգամ մը կը հաւաքուին զինավարժութեան համար, ունին երկու լեռնային թնդանօթ եւ երկու դաշային: Պատերազմի ժամանակ Մօնթէնէկը կարող է պատերազմի դաշտն հանել

- 6 գունդ անձնազահ զօրքերու,
- 7 » Քարունախաններու,
- 7 » Ռիզիֆօ-Ռիմնիֆաններու,
- 7 » Փէփէրուֆաններու,
- 9 » Երգէֆօվսիա կոչուած,
- 7 » Չէթա կոչուածներու,
- 6 » Մաւաֆա կոչուած,
- 4 » Փրեմօրնա »
- 5 » Վազօկէվիչ »

Ընդ ամէնը 59 գունդ, ինն զօրաբաժինով:

Այս գնդերը կը ներկայացընեն 40, 500 զինուոր, հազարէն աւելի թնդանօթաձիգներ եւ 200 հոգի զանազան պէտքերու համար. ուրեմն պատերազմի ժամանակ Մօնթէնէկը կարող է 41, 700 անձերէ կամ զինուորներէ բաղկացած բանակ մը ոտքի հանել: Ամէն զօրաբաժին ունի 4 լեռնային եւ 2 դաշային թնդանօթներ: — Պատերազմի ժամանակ ամէն մի վաշտ կամ «*շէթա*» բաղկացած է 200 հոգիէ, իսկ մէն մի գունդ 1100 հոգի է. վաշտին գլուխը կը զսնուի մի հրամանասար եւ մի օգնական — հրամանասար (*չոսօժիզըր*), 10 սասնապետ (*սէսսէֆար*), մի մի դրօշակիրներ եւ հրացանաձիգներ (*չօզնիֆ*):

Մէն մի Մօնթէնէկոցի — բացի մահմետականներէն՝ որոնք ազատ են զինուորական ծառայութենէ — պարտի 16 սարեկանէն մինչեւ 60 սարեկան հասակը զինուորական ծառայութիւն ընել: Երկու դասակարգի կը բաժնուին զինուորները. առաջին կարգին կը պատկանին 18 էն 40 սարեկան մար-

դիկը, երկրորդ կարգին պատկանողները 16 էն 18 եւ 40 էն 60 սարեկանները: Մահմետականներն որ ազատ են զինուորութենէ, սարեկան 21 *չիշթաս* (մօտ երկու ճրանգ) տար կը վճարեն:

Մօնթէնէկոցի իշխանը բանակին ընդհանուր պէտք եւ հրամանասարն է: Պատերազմական միջիստրութիւնը կազմուած է երեք սպայներէ, մի *էնժէնէրէ* եւ մի գանձապահէ: Մօնթէնէկոցի իշխանութիւնն ունի 35,000 պէրսան, 20,000 պէրնըր, 20,000 մարքիսի եւ 20,000 վեցհարուածեան: Նորատեսակ հրացաններու համար կը զսնուին 20 միլիօն փամփուօսներ: Մօնթէնէկոցն ունի չորս վառօդանոց ուր ոչ միայն փամփուօսներ կը շինուին, այլ եւ կը նորոգուին թնդանօթները եւ հրացանները: — Մասնաւոր խնամքով կազմակերպուած է թնդանօթաձիգ գունդը. նա ունի 26 լեռնային թնդանօթ ֆրուփի սիսդեմով, 7, 5 մեծութեամբ, սասնեղու դաշտի թնդանօթներ նոյնպէս ֆրուփի սիստեմով եւ 8, 7 մեծութեամբ, ասկէ զատ 60 ուրիշ թնդանօթներ զանազան մեծութեամբ:

Մօնթէնէկոցի կարող է հինգ օրուան մէջ իւր բանակը շարժել, երկրին որ կողմը որ կէտին վրայ որ ուզէ դրկել: — Նամակս վերջացնելէ առաջ ըս'մ, իբր պարզ տեղեկութիւն, թէ Մօնթէնէկոցի սարեկան պիստէն է եօթնհարիւր հազար ճլորէն (այսինքն մէկ միլիօն 400,000 ճր.). հասարակաց պարտքն է ինն հարիւր վաթսուց հազար ճլորէն:

Այս ալ աւելցնենք որ Ռուսաց կայսրներն ամեն սարի կարեւոր գումարներ կը դրկեն Մօնթէնէկոցի իշխանին, ու գումարները կը գործածուին միայն իշխանութեան բանակին համար եւ արդէն Չարը միայն այս նպատակով կը վճարէ այդ փողը:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ ԲԷԿ